ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար կենցաղային, տնտեսական, գրասենյակային ապրանքների և տնտեսող լամպերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/12» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի հունիսի 12-ին կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/12-1» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2024 թվականի սեպտեմբերի 06-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, Պայմանագրի 3-րդ չափաբաժնով նախատեսված 1500 հատ տնտեսող լամպերից 500 հատ տնտեսող լամպերի, 4-րդ չափաբաժնով նախատեսված 1500 հատ տնտեսող լամպերից 500 հատ տնտեսող լամպերի մատակարարման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 8.5 և 8.15 կետեր:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ 12.06.2024թ. N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/12-1» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

« 06 » « 09 » 2024թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և ՖՈՒԴ ՄՈՒԴ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Թ. Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 12.06.2024թ. կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/12-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Պայմանագրի 3-րդ չափաբաժնով նախատեսված 1500 հատ տնտեսող լամպերից 500 հատ տնտեսող լամպերի մասով նախատեսված 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամ, 4-րդ չափաբաժնով նախատեսված 1500 հատ տնտեսող լամպերից 500 հատ տնտեսող լամպերի մասով նախատեսված 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամ ֆինանսական միջոցների առկայությունը և ապրանքների մատակարարման անհրաժեշտությունը՝

1.1. Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Դատական դեպարտամենտ	***ՖՈՒԴ ՄՈՒԴ ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ք. Երևան, Ավան, Հ. Հովհաննիսյան 24/7
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 01040645
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 19300658434900
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյան	Տնօրեն՝ Թ. Հովհաննիսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
L.S.	L.S.

Հավելված N 1
« 06» « 09 » 2024թ. կնքված N 1 համաձայնագրի

(Հավելված N 3
« 12 » « 06 » 2024թ. կնքված
N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/12-1» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում			
			հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
3	31531300/526	Տնտեսող լամպեր	2 000 000	2 000 000	2 000 000	**2 000 000**
4	31531300/527	Տնտեսող լամպեր	2 000 000	2 000 000	2 000 000	**2 000 000**

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են առողջական կարգով:*

ԳՆՈՐԴ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Ս. Դալլաքյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
ՖՈՒԴ ՄՈՒԴ ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ավան, Հ. Հովհաննիսյան 24/7
ՀՎՀՀ՝ 01040645
Հ/Հ՝ 19300658434900
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Թ. Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ.